վասն սբրաղօլուն թէ Այսպէս զմեզ նեղացնէ և դուք գիտա՞կ էք բանիս, եւ նոքա ասեն՝ Չէ՛։ Եւ վէզիրն նեղանայ նորա եւ ձայնէ զնա, պատուիրէ թէ Վասն է՞ր մօտիս զՀայքն և զռայաքն. և փոխեաց զնա և միւս մի եդ ի տեղ նորա եւ նա ոչ մօտէր զմեզ։ Աւուրքս զմիականի չաւուշն եդին սուպաշի։

Օրս Խաչատուր եպիսկոպոսն ըմբռնեալ զԲռէճէպն եւ տարաւ ի մօտ վարդապետքն վասն յիշատակելոյ զՅակոբ կաթողիկոսն, եւ որքան ասէին Մի՛ յիշեր, եւ նա յիշէր խրատով եւ թեւով Թըլթըլին։ Եւ Վարդապետն բազում նախատանօք ի դուրս արաւ և արհամարհեաց զեպիսկոպոսն թէ Զայսպիսին իմ առաջի կու բերես, եւ ասաց աթոռակալին եւ եկեղեցականին թէ Ո՛վ որ նորա հետ փոխ ասէ եւ նորա քարոզին յետն աղօթք ասէ և ո՛ր երէց զնա ի մահ և ի կեանք տանի կամ տայ կատարել՝ զնորա փիլոնն առէ՛ք, եւ թէ չառնէք՝ զձեզ չարաչար բանադրելոց եմ։

Կիրակի օր (3 Օքտ.) ի Մղսոնցն էի, եւ յետ կէս աւուրն Մղտեսի Տիլէկն առեալ զիս տարաւ ի մէյխանան ի պատիւ վարպետացն, եւ երեկոյիս եկաք։

Եւ օրս կարծեմ թէ մուշավէրէ կայր վասն Ֆռանկին։ Եւ յաւուրքս թագաւորն կեօչէր ի յՈւսկիւտարն։ Եւ օրս հարսնիք շատ կայր։ Եւ ասացին թէ Ֆռանկն զՊօղազի բերդն կու ծեծէ։ Եւ օրս զեղիազար վարդապետն տարան ի պատիւ Խոճա Աւէտն Վանցի եւ ընդ նորա Ըռուհիճանն եւ Պարսամն եւ այլք։

Բշի (4 Օքտ.) զփուռն մեր տօչէմէ արարին։

Եւ Գշի (5 Օքտ.) ելեալ ընդ տղայոց փռան ի Պանդալեան գնացաք եւ երեկոյիս եկաք։

Դշի օրս (6 Օքտ.) վէզիրն ի զօլ էր հեծեալ մեծամեծօքն եւ Ա. Բ տեղ կու բռնեն զափուքեհեասիքն զհայ տղաք՝ թէ հալաւով են, եւ տանին ընդ առաջ նորա, եւ նա թող կու տայ եւ ոչ անսայ նոցա։